տաւորացն համար, եւ կտաւ վասն պատա-
նաց։ Խրդիք կան Ի—Լ տուն· նաեւ Հոռոմք,
եւ նոքա չքաւոր։ Կայ չորս գլխաւոր վանք՝ 40
չորս ազգի· այս է· Հայու, Հոռմի, Ֆռանկի
եւ Սրֆու· բայց սրրֆ, ֆռանկ չկայ, միայն
կարգաւորք։ Եւ այս չորս վանացս է տուրքն
ամենի, չօպնի, պարոնի, սուլտանու, չէխե-
րուն· եւ սաստիկ տուրք ու տալիք կու տայ 45
չորս վանքս այս ի բոլոր տարին, որպէս ի
նախնեաց թային է եղել, զատ զայն որ զուր
եւ անիրաւ անօրէնքն բուխթան եւ իֆդիրայ
կ՝առնեն, եւ ճօռումէն՝ հարիւրով, հազա-
րով· վա՜յ ինձ· զի վասն իմ անթիւ եւ անհա- 50
մար մեղաց Աստուած եւ զիւր տունն եւ զքա-
ղաքն մատնեաց անօրինաց ձեռն՝ խոտաց եւ
ապստամբողաց։

Եւ որչափ ըխտաւորք դան թէ շատ թէ
քիչ, աղքատ թէ հարուստ՝ պարոն, չուպա- 55
չին, չեխերն կ՝ուղարկեն աչքի լոյս առաջնոր-
դին· նա պիտի մեծ մեծ փէշքէշնի դաւորէ
նոցա։ Եւ չունի ուրիշ ազգ այնպէս տեղ կամ
վանք, այլ ըխտաւորք նոցա դան եւ ի խանէրն
իջնուն· իսկ Հայոց սուրբ Յակոբն լայն եւ ար- 60
ձակ· թէեւ ԺՌ հոգի դայ, կու մեկնի· զի է
որպէս քաղաք· փա՜ռք Աստուծոյ։

Եւ յորժամ աւագ տօներն դան, սկսանին
ամենայն կողմանց գալ ուխտաւորք, որպէս
նախասացաք, թէ չորս կողմանց· եւ յետ ու 65
առաջ ծովով եւ ցամաքով։ Եւ որք մերձ են՝

45 տա։ — 50 համար։